5322

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«07» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 118 - 25

Նախաձեռնող՝ *«ՄԱԼԿԵՍ» ՍՊԸ*
Կապան Ա. Մանուկյան 1 ա

Գործունեությունը՝ *Լեռնաձորի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «Մալկես» փեղամասում արդյունահանում*
Սյունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 118 - 25

«07» մայիսի **2025թ.**

Սյունիքի մարզի Լեռնաձորի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «Մալկես» տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՄԱԼԿԵՍ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	/Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Քաջարան համայնք, Լեռնաձոր բնակավայր

Ներածական մաս. Լեռնաձորի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «Մալկես» տեղամասը գտնվում է Սյունիքի մարզում՝ Քաջարան համայնքի Լեռնաձոր բնակավայրի վարչական տարածքում՝ բնակավայրից 1.2 կմ հեռավորության վրա, Ողջի գետի ողողահունում և զբաղեցնում է մոտ 0.74 հա /7421մ^2/ տարածք:

Հայցվող տեղամասի հողերը համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողեր են:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի թ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Սյունիքի մարզի Լեռնաձորի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «ՄԱԼԿԵՍ» տեղամասի պաշարները 2022թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ հաստատվել են տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023թ. հոկտեմբերի 13-ի թիվ 2132-Ա հրամանով:

«Մալկես» ՍՊԸ-ն նախատեսում է հանքավայրը շահագործել 2 փուլով: Հանքավայրի շահագործման առաջին 20 տարում նախատեսված է շահագործման 1-ին փուլը, 4959.7 մ^2 մակերեսի վրա:

1-ին փուլի նախագծվող բացահանքի եզրագծի ծայրակետերի կոորդինատներն են ARM WGS-84 համակարգով՝

hh	X	Y
1.	4337387.3100	8604731.4900
2.	4337424.8200	8604711.2200
3.	4337468.9800	8604782.4400
4.	4337520.2000	8604837.3200
5.	4337527.4570	8604850.3920
6.	4337509.2620	8604847.2100
7.	4337493.3050	8604847.3730
8.	4337479.7520	8604829.5410
9.	4337426.3180	8604776.8070
10.	4337416.0850	8604761.9070

Հանքավայրի նախագծվող տեղամասի օգտակար հանածոյի մարվող պաշարները 1-ին փուլի 20 տարվա ընթացքում կազմելու են 419.6 հազ. մ^3, այդ թվում ստատիկ մարվող պաշարները՝ 20980 մ^3, իսկ դինամիկ վերականգնվող պաշարները՝ 398620 մ^3: Տարեկան մարվող պաշարները կազմելու են 20980 մ^3, տարեկան կորզվող պաշարները՝ 20794 մ^3:

Հանքավայրում արդյունահանումը կատարվելու է ավազակոպճային խառնուրդի կուտակի ողջ հզորությամբ՝ դրա ստորին մասում թողնելով մինչև 10 սմ հզորությամբ շերտ:

Բացահանքը վերջնական դիրքում ունենալու է հետևյալ պարամետրերը՝

- ամենամեծ երկարությունը՝ 170 մ,
- ամենամեծ լայնությունը՝ 43 մ,
- ամենամեծ խորությունը՝ 4.6 մ,
- օգտակար հանածոյի միջին հզորությունը՝ 4.23 մ,
- օտարման տարածքը՝ 4959.7 մ^2,

Հանքավայրի շահագործման ժամանակ ընդունված է ընդլայնական ընթացքաշերտերով միակողանի մշակման համակարգ: Հանքաշերտի բացումը կատարվելու է բացահանքի հարավ արևելյան մասից ընդլայնական խրամի անցումով: Կտրող խրամի երկարությունը բացահանքում կազմում է միջինում 40 մ, լայնությունը հիմքի մասում՝ միջինում 2.0 մ, միջին խորությունը՝ 4.13 մ:

Լեռնային աշխատանքների կազմակերպման և ԱԿԽ-ի արդյունահանումն իրականացնելու համար կատարվելու են հետևյալ աշխատանքները.

- մոտեցող բնահողային ավտոճանապարհի կարգաբերում: (ավտոճանապարհի երկարությունը՝ 50 մ, ամենամեծ թեքությունը 0%, 6 մ լայնությամբ, կատարվող հողային աշխատանքների ծավալը՝ 120 մ^3)

- դրենաժային (ցամաքեցման) առվի կառուցում բացահանքի հարավ արևելյան մասից՝ 50 մ երկարությամբ և 5% թեքությամբ՝ 1100 մ^3,
- արդյունաբերական հրապարակի կարգաբերում՝ 40 մ^3,
-բացահանքի մակերևույթով ավտոինքնաթափի շարժման ուղեծրով, ինչպես նաև արդյունահանվող ընթացաշերտին զուգահեռ, էքսկավատորի շարժման ուղեծրով – ՊԺԲ-32 մակնիշի փոխադրվող երկաթբետոնյա սալիկների տեղադրումը (25 մ երկարությամբ, 15 մ լայնությամբ),

Ավազակոպճային խառնուրդի արդյունահանման աշխատանքները կատարվելու են դեպի ներքև շերեփման եղանակով, 1.0 մ^3 շերեփի տարողությամբ հակառակ բահով սարքավորված էքսկավատորով: Նախ կատարվելու է օգտակար հանածոյի արդյունահանում և կուտակում օգտակար հաստաշերտի մակերևույթին (առաստաղին)՝ օգտակար հանածոյի ջրազրկման նպատակով, որից հետո իրականացվելու է ջրազրկված օգտակար հանածոյի կույտի բարձումը տրանսպորտային միջոցների մեջ:

ԱԿԽ-ի հանքավայրը գետաողողատային տիպի հանքավայր է և ներկայացված է ավազակոպճային ապարների ժամանակակից հունային նստվածքներով:

Քանի որ գարնանային վարարաջրերը կարող են էկոլոգիական վնասներ առաջացնել, ապա ամեն տարի սեզոնի սկզբում, արդյունահանման աշխատանքներն սկսելուց առաջ անհրաժեշտ է գետահունների մաքրում բերվածքներից:

Հանքավայրում մակաբացման ապարները բացակայում են, հետևաբար լցակույտային աշխատանքներ չեն իրականացվելու:

Բացահանքում խմելու և կենցաղային նպատակով անհրաժեշտ ջուրը բերվելու է Քաջարան համայնքից՝ ԱԲ-1.2 մակնիշի կցովի ջրի ցիստեռնով, իսկ տեխնիկական ջուրը Ողջի գետից, ջրցան ավտոմեքենայով:

Հանքավայրի շահագործման 1-ին փուլի համար իրականացվել են մթնոլորտային օդի աղտոտվածության հաշվարկներ: Հաշվարկների արդյունքների համաձայն օդի ֆոնային աղտոտվածության սահմանային թույլատրելի արտանետումների մակարդակը չի գերազանցում թույլատրելի նորմերը:

Հայցվող տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են հանդիսանու բացահանքում աշխատող տեխնիկան և ավտոտրանսպորտը: Սակայն, քանի որ դրանց ինտենսիվությունը շատ ցածր է, հետևաբար աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ: Հաշվարկներով հիմնավորվել է, որ աղմուկի և թրթռման մակարդակը գտնվում է նորմայի սահմաններում:

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանալու են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են՝ մեխանիզմներում փոխվող հնացած յուղերը և քսայուղերը, մաշված դետալների և մասերի նորով փոխարինման ժամանակ առաջացած մետաղական թափոնները (մետաղաջարդոնները) և կենցաղային աղբը:

Հանքավայրի արդյունահանման աշխատանքների ավարտից հետո իրականացվելու է ռեկուլտիվացիայի աշխատանքներ: Ռեկուլտիվացիայի ընդհանուր մակերեսը կկազմի՝ 1070 մ^2 /0.107 հա/: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման ծախսը կկազմի 334.8 հազ. ՀՀ դրամ, որից կենսաբանական ռեկուլտիվացիայի համար նախատեսվել է 21.4 հազ. ՀՀ դրամ:

Հաշվետվությունում եղած տեղեկությունների հանրագայն՝ նախատեսվող տարածքում Կարմիր

գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չկան, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնության հուշարձաններ, ինչպես նաև պատմության, մշակույթի հուշարձաններ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում, փոշու ծավալները նվազեցնելու նպատակով, նախատեսվում է օրվա ընթացքում պարբերաբար իրականացնել արտադրական հրապարակների և գրունտային ճանապարհների ջրցան,
- լեռնատրանսպորտային սարքավորումների և ավտոինքնաթափերի շարժիչների խլացուցիչների վրա զտիչների տեղադրում, ինչը թույլ կտա կրճատել գազերի արտանետումները մթնոլորտ,
- նավթամթերքները պահեստավորվելու են արտադրական հրապարակում՝ հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), ինչին տրվելու է համապատասխան թեքություն,
- օգտագործված յուղերն ու քսայուղերը հավաքվելու են առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ հնարավորություն ստեղծվելու դեպքում՝ երկրորդական վերամշակման համար,
- տեխնիկատրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգումները կատարվելու են միայն այդ նպատակով նախատեսված արտադրական հարթակներում,
- հնամաշ դետալներն ու մասերը հավաքվելու են առանձին հատկացված վայրում և հանձնվելու են որպես մետաղական ջարդոն,
- կենցաղային աղբը տեղափոխվելու է մոտակա աղբավայր՝ կնքված պայմանագրի հիման վրա:
- իրականացվելու է խախտված տարածքների ռեկուլտիվացիա,
- աշխատանքների ընթացքում բացառվելու է տեխնիկատրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տեղամասերից դուրս:

Ավազակոպճային խառնուրդի արդյունահանումը հանքավայրում կիրականացվի գետի ափին զուգահեռ՝ 10-15 մ լայնությամբ գետից մեկուսացված խրամներով՝ թողնելով մոտ 10 մ գետի և խրամի միջև՝ խառնուրդի արդյունահանման ընթացքում բնական հոսքի ռեժիմը չխաթարելու ու գետի ջրերը հնարավոր պղտորումից զերծ պահելու նպատակով:

Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1.մթնոլորտային արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ,

2.լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ

3.օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով բացահանքի և արտադրական տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ,

4. գետի ափերի և ջրերի որակի մոնիթորինգ,

5. վայրի բնության, կենսամիջավայրի, Կարմիր գրքերում ընդգրկված էդմիկ տեսակների մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ,
6. ընդերքօգտագործման տարածքում աղմուկի և թրթռման գործիքային չափումներ՝ ամսական մեկ անգամ:

Մշտադիտարկումների և բնապահպանական միջոցառումների իրականացման նպատակով ընկերությունը նախատեսում է տարեկան մասնահանել 150 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ փորձաքննության գործընթացում Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Լեռնաձոր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմնի և հանրային լսման մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Սյունիքի մարզպետարանից, Քաջարանի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, որոնք հաշվի են առնվել ՇՄԱԳ հաշվետվությունում լրամշակման ընթացքում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

-Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի № 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
-Հանքավայրի շահագործման ընթացքում ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:
- Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ շահագործման աշխատանքների ավարտից երկու տարի առաջ, հանքի փակման ծրագիրը ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
-Արդյունահանման աշխատանքների ընթացքում բացառել Ողջի գետի ողողահունում կամ ափամերձ հատվածում ցանկացած տեսակի աշխատանքների իրականացումը:
- Ողջի գետի ափամերձ հատվածում, ըստ անհրաժեշտության ապահովել ափապաշտպան շերտի կառուցումը՝ բացառելու նպատակով գետի հունի փոփոխությունը, ջրային հոսքի շեղումը, ջրային

հատկությունների փոփոխությունները:
-ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՄԱԼԿԵՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Լեռնաձորի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «Մալկես» տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան